

բուկ). «գալլաք» (սափրիչ). «տակսա կամ սակագին» (չէ՞ որ տակսա հէնց սակագին է նշանակում, էլ ի՞նչ կամ է). «մուշտարի». «դուխի» «բռնաւոր» (կալանաւոր բառի իմաստով), և այլն ևայլն, Այլ բան է, եթէ այս բառերը ժողովրդի բերանից հնչելիս լինէին, բայց գործ է ածում ինքը հեղինակը:

Թիֆլիսի բարբառով արտայալյուած տեղերը խճողուած են գրական լեզուով և ուրիշ գաւառաբարբառով. «Ան հոգիս առ, Աստօծ, ան ազատիր էս վիճակից, իմ էրէսս քու ոտին տակին» (20 եր.), «հերիք լաց ըլիս, մենք ըստի, էս աշխարքում ենք քէֆ մնում, որ Օսէին էլ երկնքումը քէֆ անի» (29 եր.), և այլն:

Սըրբագրութիւնն անտանելի է. գրաշարի և սըրբագրչի ձեռքի տակ «աղվոկատին» խօսքը յանկարծ դարձել է «այդ վախկոտին». մինչև անգամ վրիպակիները սիալ են տպուած. «տպած է՝ ջերմառանդութեամբ, պէտք է լինի՝ ջերմեռանդութեամբ», իբր թէ երկրորդ բառն աւելի ճիշտ է, քան առաջինը...

Ա.Թ.Ա.

«Ճռովմայեցի իմաստ. Էպիկանեսի կեանին ու վարդապետութիւնը», թաղմ. Զաւեն Վարդապետ, 1903թ., Վաղարշապատ.

Քաղցածին հաց պէտք է տալ, ծարաւին ջուր. սրանք յաւիտենական նշմարտութիւններ են. Ծարաւի համար մի ամբողջ դասախոսութիւն բարեգործութեան մասին չ'արժէ մի կաթիւ ջուր: Մենք ճիշտ այդ գրութեան մէջ ենք: Ընթերցող հայ հասարակութիւնը կարիք ունի ժողովրդական ընթերցանութեան յարմար գրքերի, իսկ մենք առաջարկում ենք այդ ծարաւն յագեցնելու համար ոչ թէ մարսական, այլ կոշտ ու մոշտ բաներ, որ բկին կանգնի ներս չ'երթայ: Ահա այս տպաւորութիւնն ստացանք էպիկատեմի գրքի հրատարակութիւնից: Էպիկատեմի իմաստութիւնը լաւ էր իր ժամանակի համար: Մեր մատաղ սերունդը նրա երբեմն այլանդակ (ներկայ հասկացողութեամբ) խրատներին կարօտ չէ և Աստուած չ'անի որ նրանով ղեկավարուի: Այդ սերունդի և երիտասարդութեան համար ի՞նչ գեղեցիկ դաս է «Չասես թէ վնասուեցի, երբ փոխես՝ էշը ձիու, ոչխարը եղան... այդպիսի դէպքերում աւելի ես օգտում, քան վնասում: Եթէ այդ չես հասկանում, չես հասկանում և քո բախտաւորութիւնը, երջանկութիւնը»\*) (36 երես): Ներկայ լեզ-

\*) Այդ հատուածը «Բարեկործութիւնը կորուս յէ» գլուխից ենք բաղել:

որք այդպէս վարուողը բախտաւոր և երջանիկ չի կոչում, այլ  
խարերայ և խարդախ. և այդպիսի մի վարուողութեան համար  
շատ հեշտութեամբ կարող է մեղապարտների նստարանի վրայ  
նստել: Մեր մատաղ սերունդը այդ գրքից պիտի սովորի, թէ  
հանոյելը, հօր չար լինելը, հիւանդութիւնը օգտակար բաներ  
են, որովհետեւ տանելով այդ բոլորը, մենք համբերութեան ենք  
վարժուում (44 երես): Մի ուրիշ տեղ (53 եր.) խորհուրդ է  
տալիս, որ մի ամբողջ դասախոսութիւն կարդաս մօտդ եկած  
հիւանդների և անստէր աղքատների գլխին թէ, «բարիք փնդը-  
ռել հարկաւոր է ոչ թէ իրենից դուրս, այլ հչնց իրեն մէջ»:  
Մի այլ տեղ (56 երես) «մեզանից իւրաքանչիւրի բարիքն իր  
խելացի ապրելու մեջն է—իսկ չարիքն ընդհակառակը... եթէ  
այս մենք շատ լաւ հասկանանք, այն ժամանակ ոչ ոքի հետ  
երբէք ոչ կը վիճենք և ոչ էլ կը թշնամանանք»: Մի անմիտ  
խրատ էլ բերենք և վերջ տանք (102—103 երես). «... ցան-  
կանում է նա (Աստուած), որ ես գողացնեմ, ես ևս ցանկա-  
կանում եմ այդ. կամենում է նա, որ գործեմ, անեմ այս և ոչ  
թէ այն, ես էլ նոյնն եմ ցանկանում. կամենում է նա, որ ինձ  
հետ (հայերէն ասում են ինձ պատահի և ոչ թէ ինձ հետ) մի  
որկիցէ բան պատահի, ես էլ նոյնն եմ ուզում»...

Այսպիսի գրքերի թարգմանեն ու հրատարակելը թէ որ  
բոլորովին աւելնորդ չէ, այն ժամանակ գոնէ շոայլութիւն է,  
որոնետեւ դեռ շատ հարկաւոր և օգտակար բաներ կան, որ  
չ'ունենք: Թարգմանութեան լեզուն լաւ է, թէկ տեղ-տեղ ուռ-  
սական ոճի ազդեցութիւն երևում է: Կրճատումները տեղ-տեղ  
արուած է այսպէս, որ կապը չէ պահպանուած: Դինը 40 կոպ.  
է, որ չ'արժէ:

Ա. Վ. Դ.

---

Յակոբ Կարնեցի՝ «Տեղագիր Վերին Հայոց», Կ. Կուտանեանց, 1903 թ.  
Վաղարշապատ.

---

«Տեղագիր Վերին Հայոց» գրքով տասնեօթերորդ դարու  
մի յիշատակարան է, ուր հեղինակ Տէր Յակոբ Կարնեցին տե-  
ղագրել է Արքումի կուսակալութեան—իր ժամանակի—23  
գաւառները: Տեղագրութեան մասին այն հասկացողութիւնը  
որ այժմ մենք ունենք, անծանօթ է Կարնեցուն: Համառօտակի  
նկարագրելով ամեն մի գաւառ շատ քիչ դէպքում է գաւառնե-  
րի բերքերը միասմի յիշում. արդինաբերութեան մասին  
նրա տուած տեղեկութիւնները շատ սեղմ են. իսկ ազգաբնա-